

5214

Հ. Լուսավորչական Ժողովրդական Կոմիտեի  
Բաղյալս յիլ Գրադարանային վարչութիւն

---

149

Ծ Ր Ա Ք Ր Ե Ր

ՄԵՆԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ  
ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ

ԵՈՐՀՐԳԱՅԻՆ ՀՕՑԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 6

ՀԱՍԽԷ ԼՈՒՍՍԱԳՈՐԴԻԹՅԱՆ ԺՈՂՈՎԴԴՄԵԿԱՆ  
ԿՈՄԻՍՍԻՐԻԱՏ

Քաղաքը չեմ գրագարանային վարչություն

375

Ս

# Ծ Ր Ա Ք Ր Ե Ր

ՄԵՆԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱ-  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ

99918  
II  
18032  
A

ԿԱԶՄԵՑ՝ Խ. ՄԱՅԻԼՅԱՆ



Պատ. խմբագիր՝ Թ. Զախարյան  
Սրբագրիչ՝ Ա. Արզախանյան

Իլազ. լիազոր. վ. 1094

Պատվեր 404

Հրատարակ. 3660

Տիրած 3000

---

Հանձնված է արտադրության 9 մարտի 1936 թ.

Ստորագրված է տպագրության 17 մարտի 1936 թ.

---

Պետերբախ տպարան, Յերևան, 11 Գուռնի 4

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍԻ

ՀՍԽՀ Ժողովուրդների 1935 թ. մայիսի 8-ի վորոշմամբ լիկ-կայանները, վորպես մեծահասակների անգրագիտության և կիսագրագիտության վերացման սիստեմ, վերակառուցվեցին և նրանց փոխարեն 35-36 ուսումնական տարվա սկզբից կազմակերպվեցին մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցներ:

Հիմք ունենալով այդ վորոշումը մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցների համար, 1935 թ. մշակվեց և հրատարակվեց համապատասխան ծրագիր ու յոյսպիսի ծավալով, վորպեսզի մեծահասակ անգրագետները գյուղական վայրերում չերեք (յուրաքանչյուրը վեց ամիս տևողությամբ), իսկ քաղաքներում չերկու (յուրաքանչյուրն ինն ամիս տևողությամբ) ուսումնական տարվա ընթացքում ստանան մասնաշաղկան տարրական դպրոցների ծրագրի սահմանում կրթություն:

Համ Կ (բ) Կ Կենտկոմի և ՊՍՀՄ Ժողովուրդների կողմից 1936 թ. հունվարի 16-ին մեծահասակ (16—50 տ.) ազգաբնակչության անգրագիտության և կիսագրագիտության վերացման վերաբերյալ ընդունվեց հատուկ վորոշում:

Համաձայն այդ վորոշման, անգրագիտության վերացման սիստեմի մեջ տեղի չե ունենալու հիմնական փոփոխություն:

Մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցների փոխարեն կազմակերպվում են անգրագիտության և կիսագրագիտության վերացման դպրոցներ, ուր ավանդվելու չե մայրենի լեզու, թվաբանություն և աշխարհագրություն:

Մեծահասակ անգրագետներն այդ դպրոցներում չերկու ուսումնական տարվա ընթացքում (քաղաքներում ամեն մի ուսումնական տարին 10-ը, իսկ գյուղական վայրերում 7 ամսվա տևողությամբ), յուրաքանչյուր ամսվա 12 ուր պարապելով պետք Ե դառնան գրագետներ:

Այդ նույն վորոշմամբ, 1936թ. 14—18 տարեկանները վորոնք 1936 թվին ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել պարտադիր ուսուցման ցանցից, պետք է կազմակերպվեն հատուկ դպրոցներ, վորոնցում նրանք ստանալու չեն մասսայական, տարրական դպրոցների ծավալով կըթուփյուն:

Հիմք ընդունելով Համ Կ (բ) Կ Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1936 թ. հունվարի 16-ի վորոշումը, մեծահասակների անգրագիտության և կիսագրագիտության վերացման դպրոցների համար մշակվել է ներկա ծրագիրը՝ հայոց լեզվի, թվարանության և աշխարհագրության վերաբերյալ:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Մեծահասակների անգրագիտության վերացման դպրոցների համար հաստատել հետևյալ ուսումնական պլանը՝

1. Մայրենի լեզու 200 ժամ
2. Թվաբանություն 130 ժամ

Ընդամենը՝ 330 ժամ

Անգրագիտության վերացման դպրոցների համար քաղաքներում սահմանել 10-ամսյա ուսումնական տարի՝ սեպտեմբերի 1-ից մինչև հուլիսի 1-ը, յուրաքանչյուր ամսում 12 աշխատանքային օր, որական 3-ական ժամ պարապմունք:

Գյուղական վայրերում՝ ուսումնական տարին 7 ամիս հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ը, յուրաքանչյուր ամսում 12 աշխատանքային օր, որական 4-ական ժամ պարապմունք:

Կիսագրագիտության վերացման դպրոցների համար հաստատել հետևյալ ուսումնական պլանը՝

1. Մայրենի լեզու 145 ժամ
2. Թվաբանություն 125 ժամ
3. Աշխարհագրություն 60 ժամ

Ընդամենը՝ 330 ժամ

Կիսագրագիտության վերացման դպրոցների համար սահմանել քաղաքներում 20-ամսյա ուսումնական տարի՝ սեպտեմբերի 1-ից մինչև հուլիսի 1-ը, յուրաքանչյուր ամսում 12 աշխատանքային օր, որական 3-ական ժամ պարապմունք:

Գյուղական վայրերում՝ ուսումնական տարին 7 ամիս, հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ը, ամեն ամիսը 12 աշխատանքային օր, որական 4-ական ժամ պարապմունք:

Մեծահասակ անգրագետներն անգրագիտութեան վերացման  
դպրոցներում մեկ ուսումնական տարվա ընթացքում (քաղա-  
քում 10, իսկ գյուղում 7 ամսվա տևողութեամբ) վերացնում  
են իրենց անգրագիտութեանը և դառնում կիսագրագետներ:

Կիսագրագետները, դարձյալ մեկ ուսումնական տարվա  
ընթացքում (քաղաքում 10, իսկ գյուղում 7 ամսում) կիսագրա-  
գիտութեան վերացման դպրոցներում վերացնում են իրենց  
կիսագրագիտութեանը և դառնում են գրագետներ:

## Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Ո Ւ

### ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Մեծահասակների անդրազխտութեան և կիսադրազխտութեան վերացման դպրոցի հայոց լեզվի ծրագիրը կազմված է հետևյալ յերեք հատվածներից.

1. Ընթերցանութուն.

2. Բանավոր և գրավոր խոսքի զարգացում.

3. Բերականական և ուղղագրական նախնական գիտելիքներ:

Սակայն նյութի այսպիսի դասավորումը չի նշանակում, թե հենց այդ կարգով ել պետք է անցնել: Ծրագիրը կառուցված է առանձին հատվածներով, վերպետի ուսուցչի համար ավելի պարզ և վորոշ լինեն այն գիտելիքներն ու ունակութիւնները, վորոնք սովորողները պետք է յուրացնեն: Բոլոր հատվածների պարամունքները պետք է գնան զուգահեռաբար և միմյանց հետ կապակցված ձևով: Մասնավորապես խոսքի զարգացումը վորպես աշխատանքի հիմնական մաս, ամբողջ տարին պետք է տեղ գտնի լեզվական բոլոր տեսակի աշխատանքներում:

Նույնը պետք է ասել նաև ընթերցանութեան վերաբերյալ. խոսքի զարգացման ձևերից շատերը կապված են ընթերցանութեան հետ: Բերականութեան աշխատանքի մեծ մասը նույնպես տեքստերը կարգալու հիման վրա յի կատարվում: Կեզվի դասավանդութեան հատկացրած ժամերը գանազան բաժինների միջև բաշխելիս նկատի պետք է ունենալ, վոր անդրազխտութեան վերացման դպրոցներում ժամանակի մեծ մասը հատկացված է կարգալուն և գրելուն, իսկ կիսադրազխտութեան վերացման

դպրոցներում, ժամանակը համեմատական չափով բաշխվում է կարգալու, քերականության և խոսքի զարգացման աշխատանքների միջև:

Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել թե՛ գեղագրության և թե՛ ուղղագրության վրա: Ուղղագրության ուսուցումը պետք է տանել հաջորդական կերպով, ըստ հնարավորության կապելով քերականության հետ:

Քերականության դասընթացն սկսվում է անգրագիտության վերացման դպրոցում: Այստեղ պետք է սովորեցնել պարզ նախադասութիւն ճանաչելն ու կառուցելը: Սովորողները սովորում են յենթակա և ստորոգյալ տերմինները և վոր նախադասության մյուս անդամները ընդհանուր առմամբ կոչվում են լրացումներ: Այդ դպրոցում պետք է անցնել գոյական անունների հոլովումը, բայի ժամանակների պարզ ըմբռնումը, անձնական դերանունների ճանաչումը և գաղափար կազմել ածականների մասին: Կիսագրագիտության վերացման դպրոցում պետք է ավանդել հիմնական հոլովումները: Այս դասարանում աշակերտները տերմինավորված գաղափար են ստանում նաև թվականների, դերանունների, մակբայների, կապերի, շղկապների և ձայնարկութիւնների մասին:

Անգրագիտության վերացման դպրոցներում պետք է անցնել նաև պարզ նախադասութիւններ: Նախադասության սահմանումը պետք է տալ տարեվերջում, իսկ կիսագրագիտության վերացման դպրոցում պետք է գաղափար տալ բարդ նախադասության մասին, սովորեցնել մի քանի յենթականերով և մի քանի ստորոգյալներով նախադասութիւններ կառուցել:

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման դպրոցներում սովորողները ծանոթանում են կետագրության բոլոր նշաններին, վերջակետի և առոգանության նշանների գործածության բոլոր դեպքերին, իսկ ստորակետի, միջակետի, չակերտի և մյուս նշաններին՝ պարզագույն դեպքերին:

Բանավոր խոսքի զարգացման աշխատանքներում առանձին, ուշադրութիւն պետք է դարձնել բարբառային լեզուն գրականով փոխարինելու, և խոսելիս՝ պարզ ու բարդ նախադասութիւնները կանոնավոր կառուցելու խնդրի վրա:

Բառակազմության սովորական ձևերը սովորեցնելուց հետո, կիսագրագիտության վերացման դպրոցներում սովորողներին պարզ ու հասկանալի կերպով պետք է սովորեցնել նաև բառա-

կազմութեան նոր ձևերը՝ նորագույն հասպտակները, կապելով  
այն մեր ժամանակակից լեզվաշինարարութեան գլուխը մտնելի  
խնդիրների հետ:

### ԳՐԱԾԱՆԱԶՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱ

Անդրադիտութեան վերացման դպրոցներում գրաճանաչու-  
թյունը պետք է անցնել համակցական մեթոդով: Այս մեթոդը  
համակցական է կոչվում նրա համար, վորովհետև ամբողջական  
բառերի, վանկային և հնչյունային մեթոդների լավագույն կող-  
մերի և խորհրդային դպրոցի համար միանգամայն ընդունելի  
տարրերի համակցութիւնն է ներկայացնում:

Այս մեթոդն ամբողջական բառերի մեթոդին նման է նրա-  
նով, վոր այս մեթոդով պարապելիս գրաճանաչութեան դասը  
միշտ սկսվում և վերջացվում է ամբողջական բառերով, իսկ  
տարբերվում է նրանով, վոր ամբողջական բառերը մեքենայու-  
րեն անգիր չեն անում:

Իսկ ամբողջական վանկերի մեթոդին նման է նրանով, վոր  
այս բնարանում պահպանվում է հեշտ վանկերից ավելի դժվար  
վանկերին անցնելու հաջորդականութիւնը: Սակայն այստեղ էլ  
համակցական մեթոդը տարբերվում է վանկայինից: Այս մեթո-  
դով պարապելիս յերբեք չենք դիմում առանձին վանկերն ան-  
գիր անելուն:

Համակցական մեթոդը հնչյունային մեթոդին նման ձգտում  
է կարգալու պրոցեսը հենց առաջին դասից միանգամայն հասկա-  
նալի դարձնել մեծահասակ անդրագետներին և մեծ ուշադրու-  
թյունն է դարձնում բառի հնչյունային կազմի վրա: Սակայն  
հնչյունային մեթոդից համակցական մեթոդը տարբերվում է  
նրանով, վոր ա) չի ընդունում մաքուր հնչյուններ և նրանց  
ձուլումը, բ) բացասում է կարգալու և գրելու վարժութիւնից  
միանգամայն անջատ կատարված հնչյունների վարժութիւն-  
ները, գ) աշխատանքը միշտ կատարում է միայն իմաստալի  
նյութի վրա:

Այսպիսով գրաճանաչութեան համակցական մեթոդն ամ-  
բողջական բառերի և վանկերի, վերլուծական — համադրական,  
խառն կարգալ-գրելու մեթոդ է՝ հնչյունատառային մշակման  
հիման վրա:

Գրաճանաչութեան համակցական մեթոդը վերլուծական-համադրական մեթոդ է, վորովհետև հենց առաջին դասից ամբողջական բառը հնչյունային վերլուծութեան և յենթարկվում և այդ հնչյուններից նույն բառը համադրվում է, կազմվում. որինակ՝ վաք, վար, վար:

Այս մեթոդը գրաճանաչութեան խառն մեթոդ է, վորովհետև առաջին դասից տպագիր և ձեռագիր շրիֆտը միասին են տրվում:

Վերջապես այդ մեթոդը կարգալ-գրելու մեթոդ է, վորովհետև դարձյալ հենց առաջին դասից կարգալու և գրելու աշխատանքները տարվում են միասին՝ զուգընթացաբար, այսինքն՝ վոր ամբողջական բառն ինչպես կարդում, այնպես էլ արտագրում են:

Կարգալու ուսուցման առաջին շրջանում (10-15 դաս), սովորողները նախքան ալբերենարանի տեքստը կարգալը, նրա միջինոր տրվող բառերը նախապես կազմում են հատվող այբուբենի տառերով. թղթի նեղ շերտի վրա հատվող այբուբենի տառերով կազմված բառերը նախապես վերլուծելը և ապա նույն շարժական տառերով վերլուծած բառը համադրելը մեծահասակ անգրագետներին սովորեցնում է տարբերել առանձին հնչյունները բառի մեջ և արտահայտել յուրաքանչյուր հնչյունը նրա համապատասխան տառով: Այդպիսով կատարվում է վոչ միայն հնչյունային, այլև նրան համապատասխանող տեսողական վերլուծութեան: Վոչ մի դեպքում կարգալու համար չի կարելի տալ այնպիսի բառ, վորի հնչյունային կազմը սովորողին անձանոթ է կամ անհասկանալի, վորովհետև այդ դեպքում նա այդ բառը մեքենայաբար անդիր կանի: Յերը սովորողները վարժվում են շարժական տառերով կազմված բառերը կարգալուն, գրանից հետո միայն դասատուն շատ դանդաղ կարդում է այբուբենարանի համապատասխան տեքստը: Առաջին շրջանում կարգալիս՝ պետք է բառերն արտասանել ամբողջական վանկերով, բայց յերկարացներով, վորպեսզի աշակերտները մի անգամ ևս կարողանան լսել հնչյունները բառերի մեջ և կապել նրանց համապատասխան տպագիր և ձեռագիր տառերի հետ: Գրանից հետո, սովորողները բարձրաձայն կարդում են նախ անհատորեն և ապա հաճախ նաև խմբովին: Նախ պիտի կարգալ տալ ուժեղներին և ապա՝ թուլերին, մյուսները հետևում են իրենց այբուբենարանով:

Իսկ ինչպես սովորեցնել գրել այբբենաբանի առաջին շրջանում:

Չեռագրի ուսուցման առաջին շրջանում նախ պետք է սովորողներին ընտելացնել գրելու տեխնիկային՝ կանոնավոր նստել, գրիչը կանոնավոր բռնել և այլն: Ուսուցչի անմեկչական հսկողութեամբ մեծահասակ անդրազեանները պիտի սովորեն արտադրել գիտակցորեն՝ կանոնավոր, մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր տառերով այնպիսի բառեր և կարճ նախադասութիւններ, վորոնք նախապես կազմված լինեն հատվող այբուբենի տառերով: Սկզբում ձեռագիր տեքստն արտադրում են գրատախտակից, ապա աստիճանաբար անցնում են այբբենաբանի ձեռագիր տեքստից արտադրելուն: Պետք է հետևել, վոր սովորողներն արտադրեն առանց տառ բաց թողնելու, կարողանան գրել տառատառ, իսկ չերկար բառերը՝ վանկ-վանկ, ապա ամբողջ բառեր և վերջում փոքրիկ նախադասութիւններն ամբողջութեամբ:

Կարգալու ուսուցման չերկրորդ շրջանում (30—40 դաս) խնդիր է դրվում կարգալ սովորեցնել վոչ բարդ տեքստ՝ կազմված ծանոթ տառերից՝ առանց նախապես հատվող այբուբենի տառերից այդ տեքստը կազմելու: Այս շրջանում վերջացնում են գրաճանաչութիւնը, ավարտում են այբբենաբանի մասը և այնպիսով հիմնականում տիրապետում կանոնավոր ընթերցանութեան տեխնիկային: Յերկրորդ շրջանում կարգալու հիմնական ձևը դասարանական բարձրաձայն ընթերցանութիւնն է, այսինքն չերք սովորողները հերթով կարդում են հոդվածի առանձին հատվածները: Անպայման պետք է ապահովել չորաքանչյուր դասը բոլորի կողմից կարդալը, չեթե վոչ միևնույն ժամին, գոնե հաջորդ ժամին:

Չեռագրի ուսուցման չերկրորդ շրջանում պետք է նախապատրաստել սովորողներին, վոր նրանք կարողանան ինքնուրույն գրել:

Իրա համար տվյալ շրջանում հիմնականում պետք է հիշողութեամբ գրել սովորեցնել, ինչպես և գրել ուսուցչի արտասանած ուղղագրական տեսակետից հեշտ բառեր և համառոտ նախադասութիւններ խուսափելով այնպիսի բառերից, վորոնց դրութիւնը չի համապատասխանում արտասանութեանը: Հիշողութեամբ գրելը կատարվում է այսպես. գրատախտակի վրա գրված կարճ նախադասութիւնն արտադրել են տալիս ջնջելով նախ՝ մեկ, ապա չերկու և հետո չերեք բառ:

Այս չերկրորդ շրջանում սովորողների մեջ պիտի զարգաց-

նել ուղղագրական ունակութիւնները, վորպէս մեծատառի գործածութեան պարզագոյն դեպքեր (վերնագիրը, նախադասութիւնը, հատուկ անունն սկսվում է մեծատառերով), վերջակետի գործածութիւնը վորպէս նախադասութեան վերջին նշանի, յենթամնայի գործածութիւնը տողազարձի ժամանակ:

## Մ Ր Ա Գ Ի Ր

### ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

#### 1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒՆԹՅՈՒՆ-ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԲՈՎ ՅԵՎ ԼՐԱԳՐՈՎ

(70 ժամ)

Կարողանալ առանց տառեր բաց թողնելու և կրկնութիւնների կարգալ հատվող այբուբենի տառերով կազմված բառեր, պարզ ու մատչելի բառերից կազմած համառոտ նախադասութիւններ, ուսուցչի կողմից գրատախտակին գրած բառեր ու կրճատ գրութիւններ, դասագրքի մատչելի հոգվածներ և վտանավորներ:

Հետևել, վոր կարգացածն ու արտասանածը լինեն կանոնավոր, կետադրութեան և առոգանութեան նշանների համաձայն:

Աստիճանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և բարձրաձայն կարգալուծ, իսկ ընթերցարանի բաժնում սկսել նաև ինքնուրույն կերպով լուռ գիտակցական կարգալու փորձերը:

Սովորեցնել հոգվածը մասերի բաժանել և վերնագրել:

Կարողանալ անհասկանալի բառերը կամ նախադասութիւններն առանձնացնել:

Ծանոթանալ գրքի անվանը, հեղինակին, հրատարակութեանը, տիրաժին, մի խոսքով՝ գրքի արտաքինին: Յանկի ոգնութեամբ գտնել հարկավոր հոգվածը:

Ծանոթանալ շրջանակին թերթերին՝ անուն, թիվ, Ազգան, խմբագրութիւն, թղթակցութիւն, առաջնորդող, թերթի գլխավոր բաժինները:

#### 2. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (10 ժամ)

Ծանոթացնել, վոր խոսքը կազմված է նախադասութիւնից:

Սովորեցնել պարզ նախադասութիւնն կառուցել:

Կարողանալ նախադասութիւնը բառերի բաժանել, բառերը վանկերի և վանկերը՝ հնչյունների:

Կարողանալ նախադասութեան մեջ դանել մտքով իրար հետ կապ ունեցող բառեր:

Հարցերի ոգնութեամբ (հրանց տերմինների) վորոշել նախադասութեան անդամները:

Գիտենալ վերջակետի գործածութիւնը: Կարողանալ ուսուցչի ասած պարզ նախադասութիւնները գրել՝ սկսելով և նախադասութեան վերջում վերջակետ դնելով:

Սովորել մեծատառի գործողութեան պարզագույն դեպքերը. գիտենալ, վոր վերնագիրը, գրութեան սկիզբը, մարդկանց անունը, քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների, փողոցների, գրքերի անունները գրվում են մեծատառով:

Գիտենալ շեշտի, հարցականի և բացականչական նշանների գործածութիւնը:

Բառերը լսողութեամբ տողադարձ անել: Գիտենալ տողադարձի պարզագույն դեպքերը, վոր տողադարձ անելիս տողադարձի նշան ե գրվում, միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել և այլն:

Գրութեան և արտասանութեան անհամապատասխանութիւնը, հնչյուն և տառ. գիտենալ, վոր բառի մեջ «և» սղագրութեան նշանը բաղաձայնից հետո յերկհնչյուն եվ (ար-եվ), ձայնավորից հետո յեվ (նա-յեվ) վանկի նշան ե. «և» սղագրութեան նշանը մեծատառ և չունի, գրվում ե լրիվ յեվ (Յեվ-բոպա)՝ տառերով:

Գիտենալ, վոր ոժանդակ բայը գրվում ե առանձին:

Յեղակի և հոգնակի, գիտենալ, վոր նով վերջացող բաղամական բառերը հոգնակիում գրվում են յերկու նով (սեղաններ):

### 3. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ (20 ժամ)

Գրաճանաչութիւնն անցնելուց առաջ 2-3 ժամ հատկացնել տառերի ելեմենտների վարժութիւններին և ընտելացնել գրելու տեխնիկային (գրելիս կանոնավոր նստել, գրիչը և մատիւրը կանոնավոր բռնել և այլն):

Ուսուցչի անմիջական հսկողութեամբ սովորել կանոնավոր, մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր տառերով գրել:

Կարողանալ գրատախտակից պիտակցորեն ու ճիշտ արտա-  
գրել, առանց տառ բաց թողնելու, բառ-բառ, իսկ չերկար բա-  
ռերը վանկ-վանկ, բայց վոչ տառ տառ, ապա ամբողջ բառերով  
ու ավելի ուշ՝ ամբողջ նախադասութիւններով (սկզբնական  
շրջանում տալ աջնպիսի նախադասութիւններ, վորոնք նախա-  
պէս կազմվում են հատվող այբու-բենի տառերով):

Ատիճանաբար անցնել այբբենարանի ձեռագիր տեքստից  
արտագրելուն:

Նախապէս վարժ կարգալ, սովորելուց հետո կարողանալ  
այբբենարանի տպագրից արտագրել ամբողջ բառերով, հետա-  
գալուձ և ամբողջ նախադասութիւններով:

Սովորել հիշողութեամբ բառեր և պարզ նախադասութիւն-  
ներ գրել, ինչպէս և գրել ուսուցչի արտասանած՝ ուղղագրական  
տեսակետից ճիշտ բառերը, խուսափելով աջնպիսիներից, վորոնց  
գրութիւնը չի համապատասխանում արտասանութեանը:

Պարզել սովորողների ունեցած բառապաշարը և ստուգել  
նրանց ըմբռնումը: Հարստացնել սովորողների բառապաշարը շատ  
գործածական հասարակական-քաղաքական, միջազգային և տեխ-  
նիկական բառերով: Պայքարել դասակարգայնորեն խորթ բա-  
ռերի գործածութեան դեմ:

Հետեւել գրական լեզվի մաքրութեանը և աշխատել աս-  
տիճանաբար վերացնել բարբառային ձևերը:

Սովորեցնել կանոնավոր և ազատ պատմել իրենց դիտո-  
ղութիւններէ, ապրումների, կատարած հասարակական և ար-  
տագրական աշխատանքների մասին, ժողովում կամ ուղիղով  
լսածի, կինոյում, գործարանում և այլուր տեսածի մասին:

Կարողանալ հոգւածին վերաբերվող հարցերին կարճ պա-  
տասխաններ տալ:

Վարժեցնել ինքնուրույն կերպով պատմելու փոքրիկ, պարզ  
հողմածների բովանդակութիւնը՝ սկզբում հարցերի միջոցով,  
ապա առանց հարցերի:

Կարգացածի հիմնական միտքն ամփոփել:

Կարողանալ լողունգ կազմել:

Կարողանալ պատմել կարգացած գրքույկների համառոտ

բովանդակութիւնը և իր տպավորութիւնները:

Կարգացածի շուրջը մշակված հարցերի պատասխաններն  
ինքնուրույն կերպով գրել առնել կարճ նախադասութիւններով:

Գրատախտակի վրա կանխապէս ապահովել գրվելիք բառերի  
ուղղագրութիւնը, սովորեցնել ինքնուրույն կերպով կազմել առ-

վանացուցակ, լցնել 5-6 հարցից բաղկացած անկետա, գրել կարճ նամակ, պարզ հասցե, հեռագիր, ստացական, լիազորագիր:

Ուսուցչի անմիջական հսկողութեամբ դասարանում մշակել պատի լրագրի համար կոլեկտիվ և անհատական թղթակցություններ:

## ՅԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

### Ա. ԸՆԹԵՐՑՅԱՆՈՒԹՅՈՒՆ (70 ժամ)

Կարողանալ կարգալ գիտակցորեն, ամբողջական բառերով, առանց տառեր բաց թողնելու, կապակցված, արտահայտիչ, և կանոնավոր արտասանութեամբ՝ պահպանելով առողջանութեան և կետադրութեան կանոնները:

Կարողանալ պարզ հոդվածների բովանդակութեան ինքնուրույն կերպով պատմել՝ սկզբում հարցերի միջոցով, ապա՝ առանց հարցերի:

Կարողանալ կարդացած հոդվածի վերաբերյալ արված հարցերին պատասխաններ տալ:

Կարողանալ համառոտ ձևակերպել կարդացած հոդվածի հիմնական միտքը:

Կարողանալ հոդվածը մասերի բաժանել և վերնադրել:

Հանրամատչելի մասսայական գրքույկների ընթերցանություն: Կարողանալ պատմել կարդացած գրքերի բովանդակութեանը:

Կարողանալ կարդացածից անհատականալի բառերը կամ նախադասութեաններն առանձնացնել:

Զարգացնել լուռ կարգալու ունակութեանները:

Շարունակել և խորացնել գրքով աշխատանքը, ծանոթանալ գրքի բովանդակութեանը ցանկի և առաջարանի միջոցով: Գրադարաններից ոգտվելու ունակութեանը:

Ծանոթանալ պարբերականների տեղակներին, մասսայական լրագրերի բաժիններին: Կարողանալ կարճ հաղորդումներ անել կարդացածի մասին:

### Բ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

1. Նախադասություն.—Ի՞նչ է նախադասութեանը, վերջակիաի գործածութեանը, առողջանութեան նշանների գործածութեանը:

2. Բառեր. — Բառերի կապակցութիւնը նախադասութեան մեջ, հատուկ անուաններ (մեծատառի գործածութիւնը):

3. Հնչյուններ յիվ տառեր. — Այբուբեն (փոքրատառ և մեծատառ, ուղղագրութեան նշան), վանկ, տողագարձ (ը ձայնափորը տողագարձի ժամանակ), գրութեան և արտաստանութեան անհամապատասխանութիւնը:

4. Նախադասութեան անդամներ. — Յենթակա և ստորոգյալ (համառոտ նախադասութիւն), լրացումները նախադասութեան մեջ (ընդարձակ նախադասութիւն):

5. Խոսքի մասեր. — Գոյական՝ գոյականների թիվը, գաղափար հնչյունափոխութեան մասին, գոյականների փոքրող հոգը, (ը ձայնափորը բառակցում և բառալերջում), գոյականների հոլովումը (ձայնակապի ուղղագրութիւնը): Ածական: Գաղափար անձնական դերանունների մասին: Բայ՝ բայի դեմք և թիվը, բայի ժամանակները (ներկա, անցյալ, ապառնին) բայի բացասական ձևը, բայի անորոշ ձևը, բայի հրամայական ձևը:

6. Տարբական գաղափար բառերի կազմութեան մասին. — Պարզ և բարդ բառեր, ածանցափոր բառեր (ամենագործածական նախածանցների և վերջածանցների ուղղագրութիւնը):

7. Ուղղագրական վարժութիւններ. — Ուղղագրական բառարանից ոգտվելու ունակութիւն:

**Գ. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՉԱՐԳԱՅՈՒՄ (20 ժամ)**

Սովորեցնել կանոնափոր գրական հայերենով իր մաքրը բանավոր ամփոփ հաղորդել: Հարստացնել և ճշգրտել սովորողների բառարանը գիտելիքներից ստացված նոր բառերով: Կարողանալ ազատ պատմել իր արտադրական կյանքում տեսածի և լսածի մասին: Պլանով բանավոր գեկուցելու և մտքերը կանոնափոր արտահայտելու ունակութիւնների զարգացում: Շարունակել սովորողների բառապաշարի հարստացման աշխատանքները նույնանիշ և հականիշ բառեր:

Շարունակել մաքուր, պարզ և կանոնափոր զբելու վարժութիւնները: Կարողանալ ուսուցչի արտաստանած համառոտ և բնորոշակ նախադասութիւնները գրել և դասադրքից գիտակցորեն և անսխալ արտագրութիւններ կատարել: Կարողանալ ուսուցչի առաջադրած գրավոր հարցերին ոչարզ պատասխաններ տալ: Սովորողների կյանքից վերցրած նյութը համառոտ կերպով լեզվական մշակման յենթարկել և դարձնել շարագրութեան

նյութ: Նախորդ մշակված հողվածների բովանդակության շուրջը գրել պարզ, ինքնուրույն շարադրութուն: Գասարանում ձեռք բերել մշակված հողվածների ծրագիր կազմելու ունակություն: Պատի լրագրին պարզ թղթակցություններ գրել: Սովորեցնել անկետա, նամակ, հասցե, հայտարարություն, ստացական, լիազորագիր և դիմում գրել: Գրավոր աշխատանքի ժամանակ ուղղագրական բառարանից ոգտվելու ունակություն:

### ԾՐԱԳԻՐ

ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

#### ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ա. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ (70 ժամ)

Շարունակել նախորդ դասարանի ձևով «Գրականության քրեստոմատիա»-յի հողվածները, հանրամատչելի գրքեր, մանավանդ շրջանային թերթեր ավելի արտահայտիչ և սահուն կերպով կարդալու վարժությունները:

Գրքերի և հողվածների տնային և դասարանական ինքնուրույն և լուռ ընթերցում: Ըստ պահանջի՝ բնագրից կարևոր հողվածների և մտքերի ընտրություն:

Գրքով և լրագրով կատարվող աշխատանքի խորացում: Վարժեցնել պատի և շրջանային թերթերին թղթակցելու տեխնիկային (գրավորների հետ):

Բ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ (30 ժամ)

1. Նախադասության տեսակներ. — Նախադասություններ մի քանի յենթականերով, նախադասություններ մի քանի ստորոգյալներով, նախադասություններ մի քանի համադաս լրացումներով, նախադասություններ կոչականներով, պարզ և բարդ նախադասություններ, գլխավոր և չերկրորդական նախադասություններ: Ուղղակի խոսք:

2. Սոսքի մասեր. — Գոյականի ի, ու և ան հոլովումները: Անձնական, հարցական (միայն սիվ, ինչ) և ցուցական դերանուններն ու նրանց հոլովումը: Գաղափար դիմորոշ և ստացական հողերի մասին: Բայերի անցյալ անկատար և վաղակատար ժամանակները: Թվական անուն. քանակական և դասական. սրանց

99912  
11  
14032  
A



ուղղագրութիւնը: Մակբայ: Նախադրութիւններ և հետադրութիւններ: Շաղկապ: Զայնարկութիւն:

3. Բառակազմութիւն, բարդ բառեր.— Ա հողակապ, յերբ և դրվում և յերբ չի դրվում: Գիտենալ, վոր բարդ բառերի առաջին բաղադրիչ մասն ի—ով վերջանալու դեպքում ի—ն ա հողակապի հետ դառնում և և: Հնչյունափոխութիւն.— ու և ի ձայնավորների փոխվելն ը—ի (ջուր և ջրաղաց, կէր և կրաքար) կամ բոլորովին զեղչվելը (ամիս և ամսավերջ, անասուն և անասնական), և ձայնավորի փոխվելն ի ձայնավորի (հանդես—հանդիսական): Ածանցավոր բառեր.— նախածանց՝ ան, ապ, դժ, տ, չ, գեր, արտ և այլն, վերջածանցներ ոտ, ոց, արան, ստան, եղեն և այլն, ածանցներ փոխում են բառի իմաստը նրան ուրիշ վորակ տալով (ածուխ բառն առարկա յե ցույց տալիս, իսկ ածխային՝ հատկութիւն): Գոյականացնող և ածականացնող մի քանի ածանցներ և նրանց ուղղագրութիւնը: Գաղափար հիմքի և վերջավորութեան մասին: Նորագույն հապավումներ (գյուղխորհուրդ, շրջկոմ, շրջգործկոմ, ՀՍՍՀ, ՄՈՊՐ, Համ Կ(Բ)Կ և այլն) նրանց ուղղագրութիւնը:

4. Բառերի իմաստը.— Համանիշ, նույնանիշ և նույնանուն բառեր: Բառերի առումները:

5. Կետադրութեան նշաններ.— Վերջակետի, միջակետի, ստորակետի և բութի գործածութեան ամփոփում և լրացում: Առողանութեան նշանների գործածութեան ամփոփում: Կետադրութեան մյուս նշանների գործածութեան վերաբերյալ կրկնողական վարժութիւններ: Նախադասութեան տեսակներն ու խոսքի մասերն անցնելիս սովորեցնել ստորակետի գործածութիւնը բարդ, համադաս լրացումներով, կոչական բառերով, ձայնարկութիւններով նախադասութիւնների մեջ, բութի գործածութիւնը համադաս լրացումներ ունեցող նախադասութիւնների մեջ՝ թվարկութեան ժամանակ, միջակետի և չակերտի գործածութիւնն ուղղակի խոսքի մեջ, գիտենալ միացման և անջատման գծերի գործածութիւնը:

6. Քերականական և ուղղագրական գիտելիքների ամփոփում, լրացում և սխտեմավորում:— Քերականական վերլուծութեան վարժութիւններ: Ուղղագրական վարժութիւններ, ու և ը, դ և խ, ք և կ տառերի ուղղագրութիւնը:

Գրավոր աշխատանքի ժամանակ ուղղագրական բառգրքույ-  
նից ոգտվելու վարժություն:

Ուղղագրական տետրակ պահել և այնտեղ նշանակել այն  
բառերը, վերոնց գրությունը դժվար է:

Գ. ԲՄՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐՄՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ (75 ժ.)

Կարողանալ պատմել կարգացած գրքերի համառոտ բովան-  
դակությունը և իր տպավորությունները:

Ավելի արագ և ազատ, ավելի մաքուր ու պարզ գրելու  
վարժություն թե մի առղանի և թե յերբեմն, անտող թղթի վրա:

Համառոտ շարադրություն գրելու վարժություն՝ սկզբում  
նախապես մշակված պլանով և ապա՝ առանց պլանի:

Կապակցված կերպով գրել իր համառոտ կենսագրությունը  
և իր առաջիկա անելիքները:

Ընտրած թեմայով ինքնուրույն պարզ նկարագրություններ  
գրել:

Ձ-րդ դասարանում սովորած գործնական նշանակություն  
ունեցող ավելի բարդ գրությունների վարժություններ՝ դիմում,  
հեռագիր, հայտարարություն, հասցե, անկետա և դրամի փոխա-  
դրագիր:

## ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Ինչպես առանձին ամեն մի առարկա, այնպես և Թվաբանությունն անցնելիս՝ պետք է պահպանել ծրագրային նյութերի սխտեմն ու հաջորդականությունը: Մի նյութից մյուսին կարելի չէ անցնել միայն այն ժամանակ, յերբ նախորդը գիտակցաբար ու հիմնովին յուրացված է:

Պետք է գործադրել աշխատանքի այնպիսի մեթոդներ ու յեղանակներ, վորոնք ապահովում են սովորողները ակտիվությունը, ինքնուրույնությունը և ոժանդակում նրանց գիտակցաբար յուրացնելու մշակվող նյութը: Յեզրակացություններ, հետևություններ սովորողներն իրենք պետք է հանեն ուսուցչի ոժանդակող հարցերի միջոցով, թե խնդիրներ և թե որինակներ ուձելիս՝ դա միանգամայն հնարավոր է, քանի վոր մեծահասակ անգրագետները և կիսագրագետները սովորելու չեն գալիս կյանքում արդեն ձեռք բերած վորոշ գիտելիքներով:

Թվաբանության դասավանդումը պետք է լինի կոնկրետ, զննական: Հիմնական հասկացողությունները յեզրակացվելու յեն կոնկրետ խնդիրներից: Ամեն անգամ ուսուցիչը պարտավոր է վորոշ հաջորդականությամբ ու հանգամանորեն բացատրել անցնելիք յուրաքանչյուր թեմայի հիմնական հարցերը, նշել տիպական խնդիրներն ու վարժությունները և ցույց տալ բանավոր ու գրավոր հաշվելու ձևերը:

Թվաբանական գործողությունների ունակությունները լավ յուրացվում են նպատակահարմար թվային նյութերի, որինակների միջոցով: Բայց վերացական թվերով զանազան հաշիվներ կատարել տալով հարկավոր է նկատի ունենալ, վոր դրանք ինք-

նանպատակ բաներ չեն, այլ միայն միջոց խնդիրների լուծման համար:

Մրանով չի ժխտվում բանավոր հաշվումների անհրաժեշտությունը մեծահասակների համար 100-ի, նույնիսկ 1000-ի սահմանում պետք է սովորեցնել 4 գործողություններ արագ հաշվելու պարզ ձևերը:

Թվաբանությունը ուսուցմանը հատկացված ժամանակի մի կարևոր մասը պետք է տալ խնդիրների լուծմանը, ապահովելով սովորողների հմտությունն այդտեղ: Շատ ցանկալի յե, վոր ուսուցչի առաջադրանքով նրանք ևս հաճախակի կազմեն խնդիրներ, ոգտագործելով մեր սոցիալիստական շինարարություն առորյայից վերցրած հարուստ թվական տվյալները:

Հաշվումները պետք է կատարել թե գրավոր և թե բանավոր՝ նայած կարիքին: Անհրաժեշտ է շատ մեծ տեղ տալ բանավոր հաշվին, վոր պետք է յուրացնել տալ թվաբանության ամբողջ կուրսը, ամբողջ թվերն ու կոտորակներն անցնելու ընթացքում: Բանավոր հաշիվը վերաբերվում է վոչ միայն թվային որինակներին, այլ շատ հաճախ խնդիրների լուծման. բանավոր հաշիվը լինում է թե սովորական և թե հեշտացնող յեղանակներով: Անհրաժեշտ է սովորողներին վարժեցնել այդ բոլորին:

Նկատի ունենալով, վոր մեծահասակ անդրազետ և կիսագրագետ բանվորներն ու կոլտնտեսականները սոցիալիստական շինարարության առորյայում մշտապես գործ են ունենում հաշվարկումների հետ, վորոնք գլխավորապես հիմնված են տասնորդական կոտորակների սիստեմի վրա, ուստի կիսագրագիտություն վերացման դպրոցներում հասարակ կոտորակների միջոցով կոտորակի մասին անհրաժեշտ հասկացողություն տալուց հետո տրվում է տասնորդական կոտորակի ավանդումը վորն անհրաժեշտ է անցնել հիմնավորապես:

Բացի դպրոցից՝ մշտական, պլանավորված աշխատանքներ պետք է կատարվեն նաև տանը, վորտեղ պետք է ինքնուրույն մշակվի, յուրացվի դասարանում արծարծված նյութը:

Ուսուցիչը պարտավոր է ստուգել, ուղղել սովորողների բոլոր, հատկապես գրավոր աշխատանքները: Հակառակ դեպքում սխալները կտալավորվեն նրանց մեջ, դրա հետևանքով հաշվումներն ել կլինեն անճիշտ, և ուրեմն կարմատաանան սխալ ունակությունները: Սովորողներն ել պետք է կատարեն իրենց աշխատանքների ինքնաստուգում: Բայց վերջնական ստուգումն ամեն անգամ պետք է կատարի ուսուցիչն ինքը:

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑ—130 Ժ.

1. Առաջին տասնյակի թվերի կարգալն ու գրելը: Հարցուրի սահմանում կլոր տասնյակների կարգալը, գրելը և համրիչի վրա գցելը: Զերոյի նշանակութունը թվեքը թվանշաններով գրելիս, խառը թվերի կարգալը և գրելը հարցուրի շրջանում: Յերկնիշ թվերը համրիչի վրա գցելը (20 ժամ):
2. Բանավոր և համրիչով գումարում հարցուրի սահմանում. նույնը մի տողի վրա գրելով: Գումարման նշանը (+ պլուս): Հավասարության նշանը (=) (4 ժամ):
3. Բանավոր և համրիչով հանում հարցուրի սահմանում: Նույնը մի տողի վրա գրելով: Հանման նշանը (— մինուս) (5 ժամ): Հանման ստուգումը գումարման միջոցով: գումարման ստուգումը հանման միջոցով:
4. Հարցուրի սահմանում բանավոր գումարման և հանման պարզ չեղանակները, գումարելիների տեղերը փոխելը, գումարելիների կլորացումը, հանելիի կլորացումը մինչև կլոր տասնավորներ (3 ժամ):
5. Յեռանիշ և քառանիշ թվերի կարգալը, գրելը և համրիչի վրա գցելը: Ծանոթացում թվերի կարգերին: Ծանոթացում թվերի միավորների և հազարավորների դասերին (10 ժամ):
6. Թվերի գրավոր գումարումը (քառանիշ թվերի սահմանում): Գումարելիներ, գումար: Ռուբլիներով և կոպեկներով արտահայտած թվերի գումարումը (4 ժամ):
7. Թվերի գրավոր հանումը (քառանիշ թվերի սահմանում): Նվազելի, հանելի, տարբերութուն կամ ֆացորդ: Զերոները հանման համար տված չերվու թվերի մեջ: Հանման ստուգումը գումարման միջոցով: Գումարման ստուգումը հանման միջոցով: Ռուբլիներով և կոպեկներով արտահայտված թվերի հանում (4 ժ.):
8. Հնգանիշ և վեցանիշ թվեր: Դրանց կարգալը, գրելը և համրիչի վրա գցելը. այդպիսի թվերի գումարումը և հանումը (15 ժամ):
9. Հոռմեական թվանշաններ: Հոռմեական թվանշաններով կարգալը և գրելը 30-ի սահմանում (4 ժամ):

10. Միանիշ թվերի բաղմապատկումը: Բաղմապատկման նշանը: Բաղմապատկելի, բաղմապատկելիչ, արտադրյալ: Միանիշ թվերի բաղմապատկման և բաժանման աղյուսակը: Արտադրյալի ճանփոփոխությունը բաղմապատկելի և բաղմապատկելիչ տեղերը փոխելուց: Բաղմանիշ թվերի բաղմապատկումը միանիշով: Բաղմապատկման այն դեպքերը, յերբ բաղմապատկելու վերջում և միջում դերոներ կան: Խնդիրներ (20 ժամ):

11. Յերկանիշ թվերի բաժանումը միանիշի վրա: Բաժանման նշան: Բաժանելի, բաժանարար, քանորդ: Բաղմանիշ թվերի բաժանումը միանիշի վրա: Թվերի բաժանականությունը. 10-ի, 2-ի, 5-ի, 100-ի, 25-ի, 9-ի, 3-ի վրա բաժանվող թվերի բաժանականության նշանները: Բաժանման այն դեպքերը, յերբ քանորդի մի քանի կարգերում դերոներ են ստացվում: Բաժանման ստուգումը բաղմապատկման միջոցով և ընդհակառակը: Մնացորդով բաժանում: Խնդիրներ (20 ժամ):

12. Ամեն մեծության թվեր. կարգերը և դասերը: Մեծ թվերի կարգալն ու գրելը: Հասկացողություն միլիոնի մասին. միլիոնների դաս: Հասկացողություն միլիարդի մասին. միլիարդների դաս: Մեծ թվերի գումարումը և հանումը (5 ժամ):

13. Միանիշ և բաղմանիշ թվերի բաղմապատկումը դերոներ ունեցող նշանակալին թվերով (որ. 20, 400, 700): Բաղմանի թվերի բաղմապատկումը յերկանիշ թվերով: Բաղմապատկում յեռանիշ թվով: Բաղմապատկման այն դեպքերը, յերբ թե բաղմապատկելու և թե բաղմապատկելի վերջում կամ միջում դերոներ կան: Բարդ անվանական թվերի բաղմապատկումը (10 ժամ):

14. Մետրական յերկարության չափեր— մետր, դեցիմետր, սանտիմետր, միլիմետր, կիլոմետր: Ուղիղ գծի հատվածի չափումը: Թղթի վրա 7 սմ, 5 սմ. և այլ յերկարության ուղիղ գծեր գծելը: Մետրական ծանրության չափեր— գրամ, կիլոգրամ, ցենտներ, տոնն (5 ժամ):

Հեղուկների չափ— լիտր:

Հողային չափեր— ար, հեկտար:

Անվանական թվերի վերածումը և անդրադարձումը:

Բարդ անվանական թվերի գումարումը և հանումը:

16. Կրկնություն և ամփոփում (3 ժամ):

ԿԻՍՍԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ԴՊՐՈՑ— 125 ժամ.

1. Կրկնություն անդրադիտության վերացման անցածի (3 ժամ):

2. Բաժանում կըր տասնյակները վրա: Բաժանում ամեն յերկանիշ թվի վրա (յերբ մնացորդ ե ստացվում): Բաժանում յեռանիշ թվերի վրա: Բաժանման ստուգումը բազմապատկման միջոցով և ընդհակառակը: Բաժանման ղժվար դեպքերը, յերբ քանորդի վերջում, միջում, գերոններ են ստացվում) (15 ժամ):

Բարդ անվանական թվերի բաժանումը:

3. Վարժություններ ամբողջ թվերի չորս գործողության բանալոր ու գրավոր ունակությունները ամբապնդման համար: Թվի մեկ, կամ մի քանի մասը գտնել խնդիրների միջոցով: Վարժություններ փակագծերով և իքսով (3 ժամ):

4. Թվերի բաժանականությունը. 10-ի, 2-ի, 5-ի, 100-ի, 25-ի, 9-ի, 3-ի վրա բաժանվող թվերի բաժանականության նշանները: Թվերը պարզ բազմապատկիչների վերածելը: Ամենափոքր բազմապատիկ թիվ (3 ժամ):

5. Հասարակ կոտորակներ (10 ժամ):

Գաղափար կոտորակի մասին: Կոտորակի կարգալը և գրելը: Կոտորակի համարիչը և հայտարարը, նրանց դերը: Կոտորակների մեծության համեմատումը: Ինչպես մեծացնել կամ փոքրացնել կոտորակը մի քանի անգամ (10 ժամ):

6. Տասնորդական կոտորակներ, գաղափար տասնորդական կոտորակի մասին: Չափումից ստացված թվերի գրելը տասնորդական կոտորակի ձևով: Տասնորդական կոտորակների կարգալն ու գրելը: Տասնորդական կոտորակների մեծության համեմատումը: Տասնորդական կոտորակների մեծացնելն ու փոքրացնելը 10, 100, 1000 անգամ: Տասնորդական կոտորակների գումարումը: Տասնորդական կոտորակների հանումը: Խնդիրներ և փակագծերով վարժություններ (18 ժամ):

7. Տասնորդական կոտորակների բազմապատկումը, տասնորդական կոտորակի բազմապատկումն ամբողջ թվով: Ամբողջի բազմապատկումը կոտորակով: Թվի մասը գտնելը, տասնորդական կոտորակի բազմապատկումը տասնորդական կոտորակով: Արտադրյալի կլորացումը: Խնդիրներ (10 ժամ):

8. Տասնորդական կոտորակների բաժանումը: Ամբողջ թվերի բաժանումը, յերբ տասնորդական մասեր են ստացվում: Տասնորդական կոտորակի բաժանումն ամբողջ թվի վրա: Քանորդի փոփոխությունը բաժանելին և բաժանարարը փոփոխելու հետևանքով: Ամբողջի բաժանումը տասնորդական կոտորակի վրա: Համեմատական բաժանում: Տասնորդական կոտորակի բաժանումը

տասնորդական կոտորակի վրա: Գտնել ամբողջը, յերբ տված է թվի տասնորդական մասը: Հասարակ կոտորակը տասնորդական դարձնելը և ընդհակառակը: Միջին թվաբանական: Խնդիրներ (18 ժամ):

9. Տոկոսներ. — Գաղափար տոկոսի մասին: Ինչպես տասնորդական կոտորակը վերածել տոկոսի: Տված թվի մի քանի տոկոսը գտնելը: Տված տոկոսներով ամբողջը գտնելը: Տոկոսացին հարաբերություններ: Խնդիրներ (20 ժամ):

### ՅԵՐԿԱՐԱԶԱՓԱԿԱՆ ԳԻՏՆԵԼԻՔՆԵՐ

1. Գիծ և գծային չափեր. — Ուղիղ գիծ, հատված, գծային չափեր (4 ժամ):

2. Ուղղանկյուն և քառակուսի. — Մակերես, ուղիղ անկյուն, քառակուսի: Ուղղանկյան և քառակուսու մակերեսների չափումը. քառակուսի մետրական չափեր: Ուղղանկյան մակերեսը: Քառակուսու մակերեսը: Ուղղանկյան և քառակուսու պարագիծը (4 ժամ):

3. Ծավալների չափումը և հաշվումը. — Ուղղանկյուն զուգահեռանիստ կամ չորսուկ: Հորիզոնական և ուղղահիք ուղղություններ: Խորանարդ: Ծավալների չափումը: Խորանարդ մետրական չափեր: Ուղղանկյուն զուգահեռանիստի ծավալը: Խորանարդի ծավալը (8 ժամ):

4. Յեռանկյան և բազմանկյան մակերեսը. — Անկյուններ: Յեռանկյուն. յեռանկյան տեսակները. յեռանկյան մակերեսի չափումը: Բազմանկյուն: Երջան, շրջանագիծ, տրամագիծ, շառավիղ (4 ժամ):

5. Երջանաձև դիագրամներ (2 ժամ):

6. Կրկնություն ամբողջ անցածի (3 ժամ):

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցներում աշխարհագրությունն ընդգրկում է հետևյալ թեմաները.

1. Ընդհանուր ֆիզիկական աշխարհագրություն, 2. ԽՍՀՄ-ի աշխարհագրություն և 3. աշխարհի քաղաքական քարտեզը: Դասավանդության ընթացքում պետք է նկատի ունենալ հետևյալ խնդիրները.

1. Աշխարհագրության բոլոր թեմաներն ըստ հարկի պետք է անցնել նկարների դիտումներով, քարտեզների, գլոբուսի և մոդելների կանոնավոր ոգտագործմամբ:

2. Դասավանդության ընթացքում պետք է ուսուցչի պատմածը հագեցած լինի կոնկրետ և ճշգրիտ որինականերով, փաստերով և զրույցը պետք է տարվի կենդանի ու աշխուժ:

3. Սովորողների հետաքրքրությունը բավարարելու համար պետք է նրանց հանձնարարել ինքնուրույն կերպով կարդալ աշխարհագրական հանրամատչելի բրոշյուրներ, ինչպես որինակ՝ «Աշխարհի մեծ և անեղ լեռնությունները», «Դեպի անհայտ հեռուները» և այլն:

4. Անցնելիք նյութը պետք է հարստացնել տեղական աշխարհագրական նյութերով. որինակ՝ լեթե խոսվում է ընդհանրապես լեռների, լճերի, գետերի, դաշտավայրերի, բարձրավանդակների մասին և այլն՝ պետք է տալ նաև իր շրջանի աշխարհագրական այդ կետի անունները, վերոշել նրանց տեղը, նշանակությունը և այլն. յերբ խոսվում է կլիմայի մասին՝ պետք է վերոշել տեղական կլիման պայմանավորող հանգամանքները և այլն:

Մեծահասակների կիսագրագիտության վերացման դպրոցներում սովորողներն այնքան պետք է աշխարհագրություն իմանան, վոր կարողանան ըմբռնել ֆիզիկական աշխարհագրության

վոչ բարդ խնդիրները, քարտեզներից ոգտվելու հմտություններ  
ձեռք բերեն, քարտեզների վրա կարողանան փնտրել և գտնել  
լրագրում կարդացած նշանավոր քաղաքները, գետերը, յերկրները  
ծովերը և այլն: Միաժամանակ նրանք պետք է հասկանան  
այն կարևոր խնդիրը, վոր մարդկային հասարակությունը գե-  
տության ու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց հետզհետե  
ավելի խորն է ուսումնասիրում և ճանաչում բնության ուժե-  
րը, պայքարում նրանցից վնաս տվողներին դեմ և մյուսներն ոգ-  
տագործում, ծառայեցնում իրեն: Այս կապակցութեամբ նրանք  
պետք է ըմբռնեն, թե ինչպես խորհրդային իշխանությունը հե-  
տըհետե ոգտագործում է յերկրի, մինչև այժմ չոգտագործած  
հնարավորությունները, արտագրողական ուժերի ճիշտ տեղա-  
բաշխում՝ կատարելով և բնության ուժերն ու հարստություն-  
ներն ի սպաս դնում աշխատավորութեան կարիքներին ու շահե-  
րին, սոցիալիզմի կառուցման մեծ գործին:

Ըստ առանձին թեմաների աշխատանքը պետք է տանել  
հետևյալ կերպ.

Առաջին քեմա (պլան յեվ քարտեզ).— Այս թեման անցնելիս  
սովորողները պետք է քարտեզը հասկանալու և կարգալու հըմ-  
տություն ձեռք բերեն: Պլանի վրա դյուրութեամբ է յուրաց-  
վում մասշտաբի գործածությունը և նրա ոգնութեամբ տարա-  
ծությունների չափումը: Վարժությունները կատարվում են միայն  
գծային մասշտաբով: Պլանից քարտեզին անցնելու համար սըր-  
վում է գաղափար յերկրի ձևի մասին և բերվում յերկրի գնդա-  
ձևության պարզ ապացույցներ: Մասշտաբի եյությունը և գըր-  
ծածությունը հասկանալու համար նպատակահարմար է տարբեր  
մասշտաբով գծած քարտեզների վրա չափումներ կատարել:

Աստիճանացանցը պետք է անցնել նախ գլոբուսի վրա —  
ցույց տալ նրա միջորեականներն ու զուգահեռականները՝ բա-  
ցատրելով նրանց նշանակությունը, ուշադրություն դարձնել  
նրանց ուղղութեան վրա (հորիզոնի վճր կողմի ուղղութեամբ  
են ձգվում), նրանց մեծութեան վրա (բոլոր միջորեականներն  
իրար հավասար են, իսկ զուգահեռականները, բևեռները գնա-  
լով փոքրանում են, 60 աստիճանի զուգահեռականը հավասար  
է մոտավորապես հասարակածի կեսին). գլոբուսի վրա պետք  
է գաղափար տալ նաև աշխարհագրական լայնութեան և  
լերկարութեան մասին, ապա անցնել քարտեզի աստիճանա-  
ցույցին:

Անցնելով կիսագնդերի քարտեզին, պետք է պարզաբանել վոր չուրաքանչյուր քարտեզ, վորպես կորընթարթ մակերևույթը հարթության վրա պատկերացնող, չի կարող լինել միանգամայն ճիշտ. կիսագնդերի քարտեզի վրա չկսում ենք անցնել ցամաքի և ջրի բաշխումը, տալով նրանց պայմանական նշանները քարտեզի վրա:

Ծրագրում թվարկված են աշխարհագրական այն անունները, վորոնք անհրաժեշտ միջնամուսն են համարվում սովորողների համար. հարկավոր չե նոր անուն ավելացնել, այլ անհրաժեշտ է յուրացնել տալ շատերին հարցնելով. որինակ՝ վճր ովկիանոսների միջև և գտնվում Ամերիկան, Ատլանտյան ովկիանոսը վճր աշխարհամասի միջև և գտնվում: Հնդկական ովկիանոսի արևմտյան կողմում ի՞նչ աշխարհամաս է գտնվում, իսկ հյուսիսում, արևելքում և այլն և նույն ձեղով անցնել խոշոր ծովերը քարտեզի վրա ցույց տալով:

Դրանից հետո քարտեզի վրա պետք է ցույց տալ նաև խոշոր պետությունները: Սովորողները լսել են այդ չերկրները անունները. այժմ նրանց տեղը քարտեզի վրա վորոշելով, գտնելով թե ԽՍՀՄ-ի նկատմամբ նրանք վճր կողմումն են գտնվում, ի՞նչ չերկրներով, լեռներով, գետերով կամ ծովերով են բաժանված իրարից կամ ԽՍՀՄ-ից կլրացվի վորոշ չափով նրանց գիտելիքներն այդ չերկրների մասին: Այս աշխատանքները ընթացքում պետք է հաճախ հիշատակվեն նաև գուգահեռականներն ու միջորեականները, հասարակածն ու գլխավոր միջորեականը, և վորոշվեն այդ չերկրները աշխարհագրական չերկարությունն ու լայնությունը: Իհարկե, քարտեզը կարգալու հմտությունը մի ժամում չի ձեռք բերվում. նման աշխատանքներ միշտ պետք է կատարել համապատասխան նյութերի անցման ժամանակ:

Վորպես կանոն, հարց ու պատասխանի միջոցով անցած ամեն մի թեման պետք է ամփոփել, կրկնել և ապա անցնել հաջորդին:

Յերիբոդ քեմայում (չերկրի ձևերը) պետք է ուսումնասիրել չերկրագնդի կազմությունը, չերկրի մակերևույթի վրա տեղի ունեցած կարևորագույն չերևույթները և չերկրի մակերևույթի ձևերը: Դասավանդման ընթացքում անհրաժեշտ է ոգտագործել աշխարհագրական նկարներ (հրաբուխների, լեռների և այլն): Այս թեմայի նպատակն այն պետք է լինի, վոր սովորողները խորացնեն քարտեզը կարգալու ունակությունները. հատկապես չերկրի մակերևույթի տարբեր ձևերը կարողանան վորոշել քար-

տեղի վրա և սովորեն այդ կապակցութեամբ աշխարհագրական անունների անհրաժեշտ միջնորդութեամբ, վերը տրված և ծրագրի այս բաժնում:

Յերրորդ բեմայում (ովկիանոսներ, ծովեր, գետեր և լճեր) անհրաժեշտ է գաղափար տալ յերկրագրչի ջրային շերտի և նրա նշանակութեան մասին:

Այստեղ ևս ծանրութեան կենտրոնը մնում է քարտեզի վրա ջրային տարածութեանների պայմանական նշանները հասկանալուն. անհրաժեշտ է սովորողի աչքը վարժեցնել քարտեզի վրա գետը, լիճը, ծովը, ովկիանոսը, ծոցը, նեղուցը տարբերելու և ցույց տալու. դրա համար պետք է վարժութեաններ կատարել քարտեզի վրա և յուրացնել տալ ծրագրի այդ բաժնում տված աշխարհագրական անունները: Անցնելով ծովը (ջրի) թեմային, ցույց տալ նեղուցներն ու ծոցերը, դիտելու նաև կղզիներն ու թերակղզիները և գաղափար տալ վերջինների առաջացման մասին, յուրացնել տալ կղզիների և թերակղզիների ծրագրում տված միջնորդութեամբ: Հետագայում աշխատանք կարելի է կատարել այս թեմայի համաշխարհային ջրային մեծ ճանապարհները բաժինն անցնելիս. որինակ՝ վեր ծովերն են միանում Սուեզի ջրանցքով, ինչ աշխարհամասեր և բաժանում Ջիբրալտարի նեղուցը, Պանամայի ջրանցքը. ջրային ինչ ճանապարհներով կազմող ենք Ազովի ծովից դուրս գալ Ատլանտյան ովկիանոս և այլն: Այսպիսով աշխուժութեան կմտցվի նյութի դասավանդման մեջ և այս կնպաստի քարտեզում կարգացած ու այս թեմայում տված աշխարհագրական անունները յուրացնելուն:

Չորրորդ բեման (յերկրի որեկան և տարեկան շարժումը) նպատակ ունի տալ սովորողներին դիտական պատկերացում յերկրի շարժման մասին: Պետք է հակադրել արևի յերևույթական շարժմանը դիտական բացատրութեանը յերկրի շարժման կան շարժմանը (տարվա յեղանակների առաջանալը): մասին՝ իր առանցքի շուրջը (տարվա յեղանակների առաջանալը): Պետք է հարց ու պատասխանի միջոցով ստուգել ուսանողների դիտողութեաններն արևի յերևույթական շարժման մասին՝ տարվա տարբեր յեղանակներին, կեսուրին արևի հորիզոնից բարձր լինելու մասին, որվա տեղութեան, արևի տաքացնելու կարողութեան՝ կախված նրա ճառագայթների թեքութեան աստիճանից և ապա անցնել այդ յերևույթների դիտական բացատրութեանը: Այս նյութն անցնելիս պետք է անպայման վերջեր կատարել գլոբուսի վրա (դասասենյակը միջնացնել և մոմի լույսի

տակ շարժել գլորուսը — ճիշտ պահպանելով առանցքի թեքու-  
թյունը): Դասատուն չպետք է մոռանա, վոր փորձերի ժամանակ  
առանցքի թեքութիւնն ճիշտ պահպանմամբ միայն հնարավորու-  
թյուն կունենա բացատրելու յեղանակներէ առաջանալը, ինչ-  
պես և հյուսիսային և հարավային կիսագնդերում չեղանակներէ  
տարբերութիւնը:

Սովորողներին դժվար է ամբողջութեամբ պարզարանել  
յերկրի և արեգակնային համակարգութեան առաջանալու խըն-  
դիրը, սակայն վորպես հասակավորները՝ կարելի չե ընդհանուր  
գծերով տալ յերկրի և մոլորակներէ արեգակնային զանգվածից  
առաջանալու գաղափարը և այդ ֆոնի վրա պարզել տիեզերքի  
առաջացման մասին կրօնական բացատրութեան (աշխարհի  
ստեղծագործութեան) անհեթեթութիւնը և նրա դասակարգա-  
յին ելութիւնը:

Հինգերորդ քեման (կլիմա) անցնելով սովորողները պետք է  
ճիշտ ըմբռնում ստանան կլիմայական չերեւոյթներէ մասին:  
Ցույց տալով կլիմայական գոտիները կիսագնդերի քարտեզի  
վրա և սովորողներէ անձնական դիտողութիւններէց ոգտվելով՝  
պետք է լուսաբանվի, թե ինչ հանգամանքներէց է կախված  
տվյալ վայրի կլիման (աշխարհագրական լայնութեան, վայրի  
բարձրութիւնը ծովի մակերեւոյթից, լեռներով շրջապատված  
լինելը, ծովից հեռու կամ մոտ գտնվելը, ծովային տաք և ցուրտ  
հոսանքները և այլն):

Անցնելով մթնոլորտային տեղումներին՝ դասատուն պետք  
է գիտական պարզ բացատրութիւններով ջախջախի այդ հար-  
ցում կրօնական պատկերացումները: Մոտերքում ողերևութա-  
բանական կայան գտնվելու դեպքում՝ կարելի չե եքսկուրսիա  
գնալ և հասկանալի զրույցով տալ չեղանակի նախատեսման  
միջոցները, ինչպես և այդ տեսակետից պարզել այդ կայանների  
մեծ նշանակութիւնը գլուղատնտեսութեան, ծովային և ողային  
հաղորդակցութեան խնդիրներում:

Այս բաժնի աշխարհագրական անունները (ծովային կլիմա  
ունեցող և խոնավ շրջաններ, անտառներ) սակավաթիվ են և  
դժվար չե նրանց յուրացնելը:

Վեցերորդ քեմա (յերկրագնդի բուսահողային գոտիները).  
պետք է անպայման աշխատել բուսահողային գոտիներէ առան-  
ձին լանդշաֆտային տեսարանների նկարներով: Հնարավորու-  
թեան դեպքում պետք է ոգտագործել մոզական լապտեր համա-

պատասխան դիպադողխովներով: Սովորողները պետք է կարողանան այդ զոնաները հողաբուսական և կլիմայական հատուկ քարտեզի վրա ցույց տալ և համառոտ — կոմպլեքսային բնութագրի տալ յուրաքանչյուր գոտուն: Մարդու ներգործությունը բնության վրա պետք է դասատվի կողմից տրվի զբուսի ձևով և կոնկրետ որինակներով. արհեստական վոտզում, անտառապատումներ, ձահիճները չորացում, արհեստական պարարտացում, նոր կուլտուրաների տարածում, խորհրդային լայնածավալ յերկրի բազմակողմանի ուսումնասիրություն և նրա, մինչ այժմ չուսումնասիրված ու չողտագործած հարստությունների մշակում և այլն:

Նման փաստերի հիման վրա միաժամանակ պետք է շեշտվի սոցիալիստական հասարակարգի, պրոլետարիատի ստեղծագործական թափի անհամեմատ առավելությունը կապիտալիստականի հետ համեմատած և վերջինիս մարդկային լավագույն կյանքի զարգացման ու առաջադիմության արդելակ հանդիսանալը:

Յարբորդ բեռն (յերկրակնդի բնակչությունը) անցնելիս պետք է ցույց տրվեն տարբեր ուսանների պատկանող ժողովուրդները ներկայացուցիչների նկարները, քարտեզի վրա ցույց տալ տարբեր ուսանների պատկանող ժողովուրդները տեղաշարժումը և կոնկրետ որինակներով պարզել բուրժուական ուսապական թերիայի հակագիտական և հակահեղափոխական ֆաշիստական բնույթը: Արժեքավոր կլինի, յեթե դասատուն հետաքրքիր զբուսներ կազմակերպի յերկրագնդի տարբեր ժողովուրդների կյանքի ու կենցաղի շուրջը (եակիմոսներ, նենեցներ, տաք գոտու բնակիչներ և այլն):

Ուրբորդ բեռն (ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզը). պետք է սկսել ԽՍՀՄ-ի տեղը կիսագնդերի քարտեզի վրա վորոշելու և ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզին անցնելով: ԽՍՀՄ-ի ֆիզիկո — աշխարհագրական անուններից վորոշ մասը սովորողներն արդեն անցել են կիսագնդերի (աշխարհի) քարտեզն ուսումնասիրելու ժամանակ: Մնում է այդ նույնը շարունակել ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա և ավելի լայնացնել սովորողների ֆիզիկո — աշխարհագրական գիտելիքների պաշարը ԽՍՀՄ-ի աշխարհագրության նկատմամբ:

Սովորողները քարտեզի վրա պետք է հիմնովին յուրացնեն քրագրում տված աշխարհագրական անունները և ամեն մի

առանձին դեպքում կանգ առնեն Անդրկովկասի, Հայաստանի և սովորողների շրջանի ֆիզիկական աշխարհագրության վրա: Վերջինիս միխիմումը տված և ծրագրում և պետք և այն ամբացնել սովորողների մեջ:

ԽՍՀՄ-ի համառոտ տնտեսական աշխարհագրական տվյալները պետք և նույնպես անցնել քարտեզի վրա: Տնտեսական տվյալներից վերցված են աչքի ընկնողները, վորոնց մեծ մասը սովորողները լսել են, գիտեն կամ կարդացել են թերթերում, այնպես վոր դժվար չի լինի նրանց յուրացումը: Յերկրի տնտեսական հարստության առանձին որջեկտներն անցնելիս թուուցիկ կերպով պետք և հիշատակել նաև թե ի՞նչ չափով, ինչպե՞ս և ի՞նչի համար են նրանք ոգտագործվում: Այս թեման մշակելիս ձեռքի տակ պետք և ունենալ նաև Անդրկովկասի և Հայաստանի քարտեզները:

Իններորդ քեման (աշխարհի քաղաքական քարտեզը) համարյա ամփոփում և ընդհանուր ֆիզիկական աշխարհագրությունը: Այստեղ միայն տրվում են աչքի ընկնող և մեր հարևան պետություններն ու նրանց մալրաքաղաքները: Այս թեման անցնելիս յուրաքանչյուր պետության մասին պետք և տալ համառոտ տեղեկություն տնտեսության կարևոր ճյուղերի դրության, կառավարության ձևի և մեղ հետ ներկայումս ունեցած հարպերությունների մասին: Ցույց տալ սահմանները (առանց անունների) և մալրաքաղաքը:

## ՄՐԱԳԻՐ

### Ս.ՇԵԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

#### ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ

##### 1. ՊԼԱՆ ՅԵՎ ՔԱՐՏԵԶ

Գաղափար հորիզոնի մասին: Հորիզոնի կողմերը և նրանց գտնելը արևի, աստղերի և կողմնացույցի ոգնությամբ:

Պլանը վորպես վոչ մեծ հողամասի արտանկար: Պլանի նշանակությունը յերկրի պաշտպանության և սոցիալիստական շինարարության գործում:

Կոլտնտեսության, գյուղի կամ քաղաքի պլանը: Ինչպես են գծում պլանը, մասշտաբը և նրա նշանակությունը, գծալին և թվալին մասշտաբ: Հեռավորության չափումը պլանի վրա՝ մաո-

շտաբով: Կարողանալ գծագրել պարզ պլան և կարդալ գծած պլանը (2 ժամ):

Յերկրի ձևը: Ինչպես եյին հնում պատկերացնում յերկիրը՝ Յերկրի մակերևույթի կորընթարթության, գնդաձևության մասին ապացույցներ, հորիզոնի լայնանալը վեր բարձրանասիւս. դիտողություն ծովափից՝ հեռացող և մոտեցող շողենավի շարժմանը, յերկրի ստվերը լուսնի վրա նրա խավարման ժամանակ: Յերկրագնդի մեծությունը: Գլոբուսը վորպես յերկ-  
ժամանակ: Յերկրագնդի մեծությունը: Գլոբուսը վորպես յերկ-  
րի մոդել: Դիտողություններ գլոբուսի վրա՝ բևեռներ, հասարակած: Յերկրի պատկերումը գլոբուսի վրա: Աստիճանացույց, զուգահեռականներ — աշխարհագրական լայնություն: Միջորեականներ — աշխարհագրական յերկարություն, գլխավոր միջորեական և նրա նշանակությունը: Աստիճանների համարակալումը — լայնությունը՝ հասարակածից դեպի բևեռները, յերկարությունը՝ գլխավոր միջորեականից դեպի արևելք և արևմուտք: Ցամաքի և ջրի պատկերումը գլոբուսի վրա: Աշխարհամասեր և ովկիանոսներ: Կիսագնդեր և նրանց քարտեզը (2 ժամ):

Հորիզոնի կողմերը կիսագնդերի և առհասարակ քարտեզի վրա: Ջուրը և ցամաքը պատկերելը կիսագնդերի և առհասարակ քարտեզի վրա: Աշխարհամասեր՝ Յեվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ավստրալիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Անտարկտիդա: Ովկիանոսները — Մեծ, Առլանտյան, Հնդկական: Գլխավոր ծովերը՝ Հյուսիսային Բեվեռային, Բալթիկ, Հյուսիսային կամ Գերմանական, Միջերկրական, Սև ծով:

Գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա ցույց տալ խՍՀՄ-ն, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Չինաստանը, Հնդկաստանը (3 ժամ):

## 2. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԸ

Ատմոսֆերա, Հիդրոսֆերա, Լիտոսֆերա: Յերկրագնդի ներքին կառուցվածքը — կարծր կեղև, մագմա և միջուկ: Հրաբուխ և յերկրաշարժ: Յերկրագնդի կեղևի կազմությունը՝ նստվածքալին և զանգվածային տեսակներ: Յերկրի մակերևույթի ձևերը, Բացարձակ և հարաբերական բարձրություն: Դաշտավայրեր, բարձրավանդակներ, լեռներ և լեռնադագաթներ, սրանց պատկերումը քարտեզի վրա:

Յերկրի մակերեվույթի հողմնահարումն ու վորոշումը:

Հանածո հարստութիւնները վորպես եներգիւլի և հումքի աղբյուրներ: Հանածո հարստութիւնների (քարածուխ, նավթ, յերկաթ և այլն) տեղաբաշխումն ըստ աշխարհամասերի և ԽՍՀՄ: Կիսագնդերի քարտեզի վրա ուսումնասիրել աշխարհամասերի մակերևութիւնը:

Յեկոտայում.— Դաշտավայրերից՝ Արևելյան-Յեկոտական, (ոռոսական, գերմանական, ֆրանսիական լոմբարդական, Միջին և Ստորին Դանուբյան), լեռներից՝ Ալպեր, Կարպատներ, Սկանդինավյան, Պիրինյան, Ապենինյան, Ուրալյան: Դազաթներից՝ Մոնթլան, հրաբուխներից՝ Վեզուվ (3 ժամ):

Ասիայում.— Դաշտավայրերից, Արևմտյան-Միջերկական, Արալո-Կասպյան, Չինական, Միջագետք, Գոռնի և Ռիոնի:

Լեռներից՝ Տյան-Շան, Հիմալայ, Կովկասյան. Դազաթներից՝ Եվերեստ, Մասիս, Ելբրուս, Կազբեկ, Արագած:

Հյուսիսային Ամերիկայում.— Դաշտավայրերից՝ Միսիսիպիի: Լեռներից՝ Կորդիլերյան.

Հարավային Ամերիկայում.— Դաշտավայրերից՝ Ամազոնի: Լեռներից՝ Անդյան (Կորդիլերների շարունակութիւնը):

Աֆրիկայում.— Լեռներից՝ Ատլասի (2 ժամ):

### 3. ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐ, ԾՈՎԵՐ, ԳԵՏԵՐ ՅԵՎ ԼՃԵՐ

Ովկիանոսներ և ծովեր, Ովկիանոսների խորութիւնը: Ծովային ջրի աղիութիւնը: Ծովային հոսանքներ — տաք՝ Դոլֆրշտրոմ. ցուրտ՝ Կամչատկայի: Մակընթացութիւն և տեղատվութիւն: Ծովային ալիքները և ցամաքի ափերի վողողումը: Ծովեր, նեղուցներ, թերակղզիներ, կղզիներ:

Ծովերի նշանակութիւնը (Ղրային ճանապարհ, ձկնորսութիւն և այլն): Համաշխարհային Ղրային մեծ ճանապարհները և պայքար նրանց համար: Նեղուցների և կղզիների նշանակութիւնը Ղրային ճանապարհների վրա:

Ովկիանոսներ. — Մեծ, Ատլանտյան, Հնդկական:

Ծովեր. — Հյուսիսային Բևեռային, Հյուսիսային կամ Գերմանական, Բալթիկ, Միջերկրական, Կարմիր, Ճապոնական, Բեբինգյան (2 ժամ):

Թերակղզիներ. — Սկանդինավյան, Պիրինյան, Ապենինյան, Բալկանյան, Կոլա, Դրիմ, Կամչատկա, Կորեա, Հնդկաստան, Հրնդկական, Արաբական, Փոքր Ասիա, Ալյասկա:

Կղզիներ. — Գրեկանդիա, Մեծ-Բրիտանիա, մալդիվական, Սա-  
խալին, Ջոնդյան, Անտիլյան, Ուլկիանիա:

Նեղուցներ. — Ջիբրալտար, Գարդանել, Բոսֆոր, Բերինգյան,  
Ջրանցքներ. — Սուեզի, Պանամայի (3 ժամ):

Ստորեկրյա օրեր. — Աղբյուրներ, հանքային աղբյուրներ,  
(հեյդեր), գետեր: Գետերի վտակները, աջ և ձախ ափերը, հունը,  
ավազանը: Գետերի տնտեսական նշանակությունը — վոռոգում,  
ապիտակ ածուխ, ջրային ճանապարհ, Գետային ջրանցքներ:

Գետեր. — Հոնոս, Իանուբ, Ինեպր, Դոն, Վոլգա (Ոկա և Կա-  
մա վտակներով), Որ (Իրախը վտակով), Յենիսեյ, Լենա, Ամուր,  
Քուռ, Արաքս և վտակներ Միսիսիպի (Միսուրի վտակով), Ամա-  
զոն, Նեղոս:

Լճեր. — Հոսող և չհոսող լճեր, աղի և քաղցրահամ լճեր:

Լճերից. — Լադոգա, Ոնեգա, Կասպից, Արալյան, Բայկալ,  
Սևան (2 ժամ):

#### 4. ՅԵՐԿՐԻ ՈՐԱԿԱՆ ՅԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արեգակը վորպես ջերմության և եներգիայի աղբյուր լեր-  
կըրի համար: Ջերմության փոփոխությունն յերկրի վրա որվա  
տարբեր ժամերին և տարվա տարբեր լեղանակներին: Արևի և  
մյուս լուսատուների յերևույթական շարժումը: Բևեռային աս-  
տղի հարաբերական անշարժությունը:

Յերկրի որական շարժումը: Բևեռները վորպես անշարժ  
կետեր լերկրի որական շարժման ընթացքում: Յերկրի առանցքը:  
Գիշեր և ցերեկ: Յերեկվա և գիշերվա տեղության փոփոխու-  
թյունը տարվա ընթացքում: Ջերմության կախածությունն  
արևի ճառագայթների ուղղությունից (ճառագայթները թեք են  
ընկնում յերկրի վրա թե ուղղահայաց): Յերկրի տարեկան պը-  
տույտն արևի շուրջը: Յերկրի առանցքի թեքությունն իր որ-  
բիտի նկատմամբ և տարվա լեղանակները:

Արեգակնային համակարգություն: Յերկիրը վորպես մոլո-  
րակ: Համառոտ ծանոթություն յերկրի առաջացման մասին:  
Կրոնական հայացքները տիեզերքի և յերկրի ծագման մասին.  
Նրանց անհեթեթությունը և դասակարգային ելությունը: Պալջար  
յերկրի ձևի և շարժման գիտական տեսակետների համար. (Կո-  
պերնիկոս, Ջորդանո Բրունո, Գալիլեյ) (3 ժամ):

## 5. ԿԼԻՄԱ

Յեղանակ և նրա տարբերը, Չերմություն, քամիներ, տեղումներ: Գաղափար կլիմայի մասին: Կլիմայի նշանակութունը տնտեսութեան համար: Պայքար կլիմայական վնասակար լեռնութեան դեմ: Յեղանակային յերևույթների հետ կապված կրոնական պատկերացումները: Ողբերկութեանական կայանները և նրանց տված ոգուտները:

Արեգակի տարբեր բարձրութունը հորիզոնի նկատմամբ յերկրագնդի զանազան մասերում:

Յերկրագնդի բաժանումը կլիմայական հինգ գոտիների: Արևադարձներ և բևեռային շրջաններ: Արևի ճառագայթների անկման ուղղութունը հարավային և հյուսիսային կիսագնդերի վրա տարվա տարբեր յեղանակներին: Կլիմայական տարբեր գոտիների առանձնահատկութունները.— բարձր Չերմություն և Չերմաստիճանի տատանման բացակայութուն տաք (այրեցյալ) գոտում. Չերմաստիճանի տատանումները տարվա տարբեր յեղանակներին՝ բարեխառն գոտում. ցածր Չերմաստիճան՝ ցուրտ գոտում:

Յամաքի և ջրի անհամաչափ տաքանալը: Քամիներ: Ծովային հոսանքներ: Ծովային և ցամաքային կլիմա: Ծովային հոսանքների ազդեցութունը կլիմայի վրա: Տեղի բարձրութեան ազդեցութունը կլիմայի վրա: Մթնոլորտային տեղումներ և նրանց բաշխումը յերկրագնդի վրա: Մթնոլորտային տեղումների համաշխարհային քարտեզը. խոնավ շրջաններ (Գվինեյի ծովափ, Սև ծովի, Անդրկովկասյան և Ղրիմի ափերը): Յերկրագնդի անապատները (Սահարա, Գոբբի կամ Շամո, Արաբական). Անդրկասպյան կիսաանապատային շրջանները (Կարա-Կում, Կիզիլ-Կում)(Յժ):

## 6. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՈՒՍԱՀՈՂԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Հողի բուսական և կենդանական աշխարհի կախումը կլիմայից. սրանց գոտիական տեղաշարժումը յերկրագնդի վրա:

Բևեռային շրջաններ, տունդրաներ, անտառ, տափաստան, անապատներ, մերձարևադարձային շրջաններ, արևադարձային անտառներ և սավանններ: Յուրաքանչյուր գոտու հողաբուսական և կենդանաբանական աշխարհի համառոտ բնութագրերը:

Բնութեան ոգտագործումն ու փոփոխումը մարդու միջոցով՝ կախված արտադրողական ուժերի բնույթից և աստիճանից, արտադրողական հարաբերութունների սխտեմից (բնութեան

ուժերի և հարաբերութիւնների ոգտագործման սահմանափակ հնարավորութիւնները կապիտալիստական հասարակակարգում և անսահմանափակ հնարավորութիւնները՝ սոցիալիստական հասարակակարգում (2 ժամ)։

### 7. ՅԵՐԿՐԱԳԵՆԴԻ ԲՆԱԿՁՈՒԹՅՈՒՆԸ

Բնակված և չբնակված շրջաններ լերկրագնդի վրա։ Յերկրագնդի բնակչութեան քանակը և բաշխումն ըստ աշխարհամասերի։ Յերկրագնդի խիտ բնակված շրջանները։

Մարդկութեան բաժանումն ռասաների, նրանց բնակչութեան շրջանները յերկրագնդի վրա։

Բուրժուական ռասայական և ազգային թեորիաները, նրանց դասակարգային ելութիւնը։ Գաղութային աշխատաւոր ժողովուրդները և գունավոր ցեղերի շահագործումն ու վոչնչացումը կապիտալիստներին կողմից։ (Նեգրերն ու կարմրամորթներն Ամերիկայում)։ Ստրկական աշխատանքը գաղութներում։ Ազգային հարցի լուծումը ԽՍՀՄ-ում (3 ժամ)։

### 8. ԽՍՀՄ-Ի ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

1. ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը և տեղադրումը Յեւրոպայում և Ասիայում։ ԽՍՀՄ-ի ծովային և ցամաքային սահմանները։ Նրանց նշանակութիւնը յերկրի պաշտպանութեան և տնտեսական հարաբերութիւնների տեսակետից՝ ԽՍՀՄ-ի սահմանամերձ պետութիւնները։

ԽՍՀՄ-ի առանձին մասերը. Յեւրոպական մաս, Կովկաս (Հյուսիսային և Անդրկովկաս), Միջին Ասիա, Սիբիր և Հեռավոր Արևելք (2 ժամ)։

ԽՍՀՄ-ի սահմանամերձ ծովերը. — Հյուսիսային Բևեռային, Բարենցի, Սպիտակ, Կարայի, Բերինգյան, Ուստոի, Շապոնական, Սև, Բալթիկ, Բալթիկ ծովի Ֆիննական ծոցը։

Նավահանգիստները. — Լենինգրադ, Մուրմանսկ (չսառչող), Արխանգելսկ, Իգարկա, Վլադիվաստոկ, Նովորոսիսկ, Ուեսաս, Բաթում, Հյուսիսային Բևեռային ծովի ճանապարհները և նրա նշանակութիւնը ԽՍՀՄ-ի համար։ «Սիբիրյակովի», «Չեչուսկինի» և «Էիստկելի» արշավանքը։ Պայքար բեվեռային ճանապարհ յուրացնելու համար։

Թերակղզիներ. — Կոլա, Կամչատկա, Ղրիմ։

Կղզիներ. — Մախալին, Նոր Յերկիր (2 ժամ)։

2. ԽՍՀՄ-ի մակերևույթի կազմութիւնը. դաշտավայրերի գերակշռութիւնը. լեռների ծալրամասերում գտնվելը:

Դառնալայրեր. — Արևելյան-Յեվրոպական, Արևմտյան-Սիբիրական, Արալո-Կասպիական, Բուռի, Ռիոնի:

Բարձրավանդակներ. — Միջին-Ռուսական, Մերձվոլգյան, Դոնեցի, Միջին Սիբիրական, Հայկական:

Լեռներ. — Ուրալյան, Դրիմի, Կովկասյան (Ելբրուս և Կազբեկ), Պամիրի, Տյան-Շան, Ալտայան, Կամչատկայի հրաբուխները. Անդրկովկասի լեռները՝ Աջարա-Ախլցխայի, Սուրամի, Փամբակի, Շահդադի, Ահմանզանի, Չանգեղուրի: Լեռնագագաթներից Արագած (2 ժամ):

3. ԽՍՀՄ-ի ոգտակար հանածոները: Հանքային հարըտուութիւնների հետադոտված չլինելը ցարական Ռուսաստանում: Այս տեսակետից խորհրդային իշխանության նվաճումները:

Քարածխային ավազաններ. — Դոնեցի, Կուզնեցկի, Կարագանդայի, Մերձմոսկովյան, Ուրալի, Տկվիրուլիի և Տկվարչելիի:

Նավթ. — Բաքու, Գրոզնի, Մալկոպ, Վրաստան, Եմբա, Ուրալ, Սախալին, Միջին Ասիա:

Յերկաթ. — Կերչ, Կրիվոյ Ռոզ, Ուրալ, Կուբսկի, մագնիտային անոմալիան, Դաշքեսան-Կիրովաբադի մոտ:

Մարգարիտներ. — Չխատուրի (Վրաստան):

Պղինձ. — Ուրալ, Կադակատան, Ալլահվերդի և Ափան (Հայաստանում):

Աղեր. — Խոհանոցային ծովային աղ-Բասկունչակ և Կասպից լճերից:

Քարաղ. — Դոնբաս, Նախիջևան, Ապատիտներ. — Խիբինի (Կիրովսկի) հանքերը: Կալիական աղեր. — Սուլիակամակում (Ուրալ):

Վոսկի. — Ուրալում, Սիբիրում: ԽՍՀՄ-ի տեղը մլուս պետութիւնների մեջ կարիքավոր հանածոների պաշարի և արդունահանման ասպարիզում (5 ժամ):

4. ԽՍՀՄ-ի գետերն ու լճերը. — ԽՍՀՄ-ի գետերի մեծ մասի հարթ վայրերով հոսելու հանգամանքը և դրանից բխած առանձնահատկութիւնները — ձմռանը սառցապատվելը, զարնանը՝ հորդանալը, ամռանը՝ ծանծաղանալը: Գետերի ոգտագործումը նավարկության, էլեկտրիֆիկացիայի, վոտոգման համար: Գետային ջրանցքները:

Գետերը. — Հուսիսային Դվինա, Պեչորա, Ոբ, (Իրտիշ վը-

տակով), Յենիսեյ (Անգարա վտակով), Լենա, Ամուր, Նեվա, Վոլխով, Սվիր, Դենպր, Դոն, Վոլգա (Ոկա և Կամա վտակներով), Ուրալ, Ամուր-Դարիա, Սիր-Դարիա, Գուռ, (Ալագան, Արագվա, Թարթար, Խրամ վտակներով, Խրամ վտակի Դեբեդը և նրա կազմվելը Ձորագետից և Փամփակ գետից) Արաքս (Ախուրյան, Բասախ, Ջանգու կամ Հրազդան):

Լճեր.— Լադոգա, Ոնեգա, Բասկունչակ, Կասպից, Արալյան, Բալխաշ, Բայկալ, Սևան:

Ջրանցքներ.— Հոկտեմբերյան (Մարինյան), Սպիտակ-Բալթիկ ծովյան (ընկ. Մտալինի անվան) Ջրանցք, Վոլգա-Մոսկվա Ջրանցք, Վոլգա-Դոն և Դոն-Դենպր Ջրանցքների նախագծերը: Եքսկուրսիա քարտեզի վրա այդ Ջրանցքներով:

Հիդրոկայաններ.— Վոլխովի, Սվիրի, Դենպրի, Ջագես, Ռիոնգես, Յերզես, Ձորագես, Բանաքեոգես և Սևան-Ջանգու կասկադի նախագիծը: Անգարայի հիդրոկայանների նախագիծը:

Վոռոգում.— Մեծ Վոլգայի պրոբլեմը: Անդրկովկասի և Միջին-Ասիայի Ջրանցքները (Մուղանի, Սարգարաբադի և այլն) (5 ժամ):

5. Կլիման և հողաբուսական գոտիները: ԽՍՀՄ-ի տեղադրված լինելը բարեխառն և ցուրտ գոտիներում Հյուսիսային Բեվեռային ծովի, Մեծ, Ատլանտյան ովկիանոսների ու Միջերկրական ծովի ազդեցութունը ԽՍՀՄ-ի կլիմայի վրա:

ԽՍՀՄ-ի կլիմայի փոփոխվելը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք. արևելքում ցամաքային կլիմայի ուժեղանալը և մթնոլորտային տեղումների նվազումը: Միջին Ասիայի կիսաանապատները:

ԽՍՀՄ-ի մերձարևադարձային շրջանները.— Ղրիմի հարավային ծովափ, արևմտյան Անդրկովկաս (Աջարիա և Աբխազիա), Լենքորանի ծովափ: Սուրամի և Կովկասյան լեռները նշանակութունը Անդրկովկասի կլիմայի համար: Արևելյան Անդրկովկասի տափաստանները (Մուղան) և ցամաքային կլիման: Հայկական լեռնաշխարհի ցամաքային կլիման պայմանավորող Փիլիկո-աշխարհագրական պայմանները (2 ժամ):

ԽՍՀՄ-ի բնակչութունը, ԽՍՀՄ-ի բնակչության թիվն ու խտութունը համեմատած մյուս լերկրների հետ: Բնակչության բնական աճը համեմատած մյուս լերկրների հետ, այդ տարբերությունը պայմանավորող հանգամանքները: Բնակչության խտութունը ԽՍՀՄ-ի տարբեր մասերում Հոկտեմբերից առաջ և հետո, դրա սոցիալ-տնտեսական պատճառները (արտադրողական ուժերի տեղաբաշխման ազդեցութունը):

ԽՍՀՄ-ի բնակչուժյան ազդարին կազմը (2 ժամ):

ԽՍՀՄ-ի քաղաքական բաժանումը: Միութենական հանրապետություններ և նրանց գլխավոր քաղաքները. — ՌՍՖՖՀ — Մոսկվա, Լենինգրադ, Գորկի, Իվանովո, Ուկրաինա — Կիև, Նարկով, Ուբեսա, Բելոռուսիա — Մինսկ, Թուրքմենստան — Աշխաբադ, Ուզբեկստան — Տաշքենդ, Տաճիկստան — Ստավինարադ, Անդրկովկաս — Թիֆլիս (2 ժամ):

ՍՍՖՖՀ-ի մեջ մտնող հանրապետությունները. — Վրաստան (Աբխազիա, Աջարիա, Հարավային Ոսեթիա), Ադրբեջան (Նախիջևան և Լեռնային Ղարաբաղ), Հայաստան և նրա շրջանները: Անդրկովկասի կազմի մեջ մտնող հանրապետությունների և ինքնավար շրջանների մայրաքաղաքները. բնակչուժյան թիվն ըստ առանձին հանրապետությունների: Անդրկովկասը վորպես ցարական Ռուսաստանի հետամնաց և շահագործվող մի գաղութամաս:

Անդրկովկասի միանգամայն փոխվելը խորհրդայնացումից հետո: Հետամնաց ազրարային յերկրից արդյունաբերական-ագրարային յերկրի վերածվելը:


Արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքը 1-ին հնգամյակում և 2-րդ հնգամյակի առաջին տարիներում: Անդրկովկասի հանքերը, արդյունաբերության ճյուղերը:

Անդրկովկասի գլխավոր գործարանները: Անասնապահական, բամբակամշակման, ալգեգործական շրջանները: Անդրկովկասը վորպես բամբակամշակման 2-րդ բազա (Միջին Ասիայից հետո): Թեյի և ցիտրուսային (Կիտրոն, նարինջ, մանդարին,) բույսերի, ծխախոտի մշակումն Անդրկովկասում:

Անդրկովկասի յերկաթուղիները: Եքսկուրսիա քարտեզի վրա ԽՍՀՄ-ի յերկաթուղային գլխավոր ճանապարհներով: Ողային հաղորդակցությունը ԽՍՀՄ-ում և Անդրկովկասում (4 ժամ):

Աշխարհի քաղաքական քարտեզը: Իմպերիալիստական յերկրներ, գաղութներ, կիսագաղութներ և կախյալ յերկրներ (ծանոթություն և պասսիվ յուրացում):

Պետություններ. ԱՄՆ. (Նյու-Յորք, Վաշինգտոն), Անգլիա (Լոնդոն), Ֆրանսիա (Փարիզ, Մարսել), Գերմանիա (Բեռլին), Իտալիա (Հռոմ), Ճապոնիա (Տոկիո), Ֆինլանդիա (Հելսինկի), Եստոնիա (Տալլին), Լատվիա (Ռիգա), Լիտվա (Կաունաս), Լեհաստան (Վարշավա), Ռումինիա (Բուխարեստ), Թյուրքիա (Անկարա), Իրան (Թեհրան, Թավրիզ), Ադվանստան (Բաքու), Մոնղոլիա (Ուլան-Ֆատոր), Չինաստան (Նանկին, Շանհայ) (4 ժամ):



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004447

284

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

A <sup>II</sup>  
23071

124.



ПРОГРАММЫ

Для школ великовозрастных по  
ликвидации неграмотности и  
малограмотности

Составил М. Манлян

ГИЗ ССР Армении, Эривань, 1936